ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների ներգրավածությունը դասին համագործակցային մեթոդով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Մայա Պետրոսյան

ԴՊՐՈՑ՝ Վարդենիսի համար 3 հիմնական դպրոց

2022թ.

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն_____3

Գրական ակնարկ_____5

Փորձարարական հետազոտություն_____8

Խմբի նկարագիր_____10

Հետազոտության ընթացք_____10

Փորձարարական դաս 1_____11

Փորձարարական դաս 2_____13

Տվյալների մշակում և վերլուծություն_____15

Եզրակացություն_____16

Օգրագործված գրականության ցանկ_____18

Հավելված

Հայտորոշիչ թեստ

Դասապլան 1

Դասապլան 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորարար մանկավարժական տեխնոլոգիաները փոխկապակցված են և կազմում են որոշակի դիդակտիկ համակարգ, որն ուղղված է այնպիսի արժեքների խթանմանը, ինչպիսիք են ազնվությունը, բարեգործությունը, փոխօգնությունը և յուրաքանչյուր աշակերտի կրթական կարիքների ապահովումը `իր անհատական հատկանիշներին համապատասխան:

Յուրաքանչյուր ուսուցիչ գոնե մեկ անգամ իրեն տվել է այն հարցը, թե ինչու է աշակերտի մոտ դասի հաճախումներին զուգընթաց անկում ապրում սովորելու ցանկությունը: Բոլոր երեխաները դպրոց գնալիս ունենում են սովորելու ցանկություն, ինչու երեխան, որը գենետիկորեն նախատրամադրված է սովորելուն, ժամանակի ընթացքում դասը նրա համար դառնում է դժվար ու ձանձրալի :

Մեր կրթական համակարգը հայտնվել է մի փուլում, որտեղ ազգային առանձնահատկությունների և կրթական մարտահրավերների համադրմամբ ստեղծվում է մի կրթական միջավայր, որտեղ մանկավարժական տեխնոլոգիաները ուղղված են ոչ թե դեպի գիտելիքի գերակայություն, այլ մասնագետների պատրաստման անհատական ստեղծագործական ձևեր ու նշանակություններ:

Ժամանակակից դպրոցի հիմնարար գաղափարը երեխայի անհատականության զարգացումն է `կրթության արդյունավետ տեխնիկայի և մեթոդների որոնման միջոցով: Հիմնական խնդիրը երեխաների ինքնազարգացման դրական մոտիվացիայի ձևավորումն է, մտավոր, ստեղծագործական ունակությունների կատարելագործումը: Այլ կերպ ասած, դպրոցը ոչ թե ապագա մեծահասակների պատրաստման վայր է, այլ այն վայրը, որտեղ երեխային սովորեցնում են ապրել շրջապատող աշխարհում, աշխատել այլ մարդկանց հետ և, ի թիվս այլ բաների, ինքնուրույն ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ;

Միշտ ինձ տանջել է այն հարցը, թե ինչու ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները չեն մոտիվացվում իրենցից լավ սովորող դասընկերներով: Փորձել եմ տարբեր ձևերով ներգրավվել դասապրոցեսում, բայց էական փոփոխություն չեմ նկատել:Կախված թեմայից լինում են դրական փոխություններ , բայց կարճ ժամանակով: Եվ հետազոտական դաս կատարելու նպատակով որոշեցի

համագործակցային մեթոդի միջոցով ներգրավվել ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին:

Երբ նրանց հետ խոսեցի թեմայի վերաբերյալ և առաջարկեցի իմ մտահաղացումներից մի քանիսը, նրանց կարծես հետաքրքրեց այդ աշխատանքը ,շատ ոգևորվեցին և որոշեցին հենց նույն պահին, թե ով ինչ պիտի անի:

Իմ նպատակն է համագործակցային մեթոդի միջոցով խթանել ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների մասնակցութունը դասապրոցեսում:Եվ ենթադրում եմ ստանալ ամենաշոշափելի դրական արդյունքը ուսուցման գործընթացում հետևյալ խնդիրները պարզելու միջոցով՝

●Ներգրավածության պակաս

●Մոտիվացիա

●Ուշադրության բացակայություն

●Առաջադիմության ցածր մակարդակ

ԳՐԱԿՆ ԱԿՆԱՐԿ

Համագործակցային ուսուցումը ուսուցման կրթական մոտեցում է, որը ներառում է ուսանողների խմբեր, որոնք միասին աշխատում են խնդրի լուծման, առաջադրանքի կատարման կամ արտադրանքի ստեղծման համար: Ըստ Գերլախի, «Համատեղ ուսուցումը հիմնված է այն գաղափարի վրա, որ սովորելը բնականաբար սոցիալական գործողություն է, որի ընթացքում մասնակիցները խոսում են միմյանց հետ (Գերլախ, 1994): Խոսքի միջոցով է տեղի ունենում ուսուցումը:
Սովորելը ակտիվ գործընթաց է, որի միջոցով աշակերտները յուրացնում են տեղեկատվությունը և այդ նոր գիտելիքները կապում նախորդ գիտելիքների հետ: Սովորելը պահանջում է մարտահրավեր, որը դուռ է բացում սովորողի համար `ակտիվորեն ներգրավելու իր հասակակիցներին մշակելու և սինթեզելու տեղեկատվությունը, այլ ոչ թե պարզապես անգիր անելու և հետադարձելու այն: Սովորողները շահում են, երբ ենթարկվում են տարբեր մարդկանց տեսակետների: Սովորելը ծաղկում է սոցիալական միջավայրում, որտեղ տեղի է ունենում սովորողների միջև զրույց: Այս ինտելեկտուալ մարմնամարզության ընթացքում սովորողը դիսկուրսին համապատասխան ստեղծում է իմաստ:
Համագործակցային ուսուցման միջավայրում սովորողները մարտահրավեր են նետում ինչպես սոցիալական, այնպես էլ զգացմունքային, երբ լսում են տարբեր հեռանկարներ, որտեղ պահանջվում է արտահայտել և պաշտպանել իրենց գաղափարները: Դրանով սովորողները սկսում են ստեղծել իրենց յուրահատուկ հայեցակարգային շրջանակները և չհենվել միայն փորձագետի կամ տեքստի տվյալների վրա: Այսպիսով, համատեղ ուսուցման պայմաններում սովորողները հնարավորություն ունեն զրուցել հասակակիցների հետ, ներկայացնել և պաշտպանել գաղափարներ, փոխանակել բազմազան համոզմունքներ, կասկածի տակ դնել այլ հայեցակարգային շրջանակներ և ակտիվորեն ներգրավվել:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ի հայտ է եկել որպես դասարան-դաս ավանդական համակարգի այլընտրանք: Դրա հեղինակները մեկ գործընթացում համատեղել են երեք գաղափար.

●թիմային ուսուցում

● ինքնագնահատում

●փոքր խմբերով ուսուցում

Սա կոչվել է մեկ տերմինով `համատեղ ուսուցում: Համագործակցաբար սովորելիս կրթական գործընթացի վրա ազդող հիմնական ուժը դարձել է կոլեկտիվի, ուսումնական խմբի ազդեցությունը, ինչը գործնականում անհնար է ավանդական ուսուցման դեպքում:
Այս մանկավարժական տեխնոլոգիան համարվում է ամենաարդյունավետներից մեկը և ոչ միշտ է տալիս սպասված արդյունքը, հաճախ ` անկանխատեսելի;
Երբեմն ընթերցողի համար դժվար է լինում օգնություն ցուցաբերել դասարանի յուրաքանչյուր կոնկրետ աշակերտի: Համագործակցային ուսուցումը լուծում է այս խնդիրը: Փոքր խմբերում աշխատող աշակերտները սովորում են օգնել միմյանց և պատասխանատվություն կրել յուրաքանչյուրի հաջողության համար:
Համագործակցության մեջ սովորելու նպատակը յուրաքանչյուր աշակերտի կողմից իր անհատական զարգացման բնութագրերին համապատասխան մակարդակով գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումն է: Շատ կարեւոր է սոցիալականացման ազդեցությունը, հաղորդակցման հմտությունների ձևավորումը: Ինչպես Փեթթին է ասել <<Մենք սովորում ենք գործով>>: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ակտիվ ուսումը շատ ավելի լավ է հիշվում, աշակերտները դրանից հաճույք են ստանում և նյութը ավելի լավ է հասկացվում: Ակտիվ մեթոդները մեզանից պահանջում են «դառնալ մեր սեփական իմաստը, այսինքն ` զարգացնել մեր սովորածի մասին մեր պատկերացումները: Այս գործընթացի ընթացքում մենք ֆիզիկական կապեր ենք հաստատում մեր ուղեղում, որն էլ անվանում ենք սովորել: Պասիվ մեթոդները, ինչպիսիք են լսելը, մեզանից չեն պահանջում կատարել այս նյարդային կապերը կամ հասկացությունները:

Լավ աշակերտները կարող են իմաստ ստեղծել պասիվ մեթոդներից, իսկ թույլ աշակերտները՝ ոչ: Երկու տեսակի աշակերտներն էլ բարելավում են իրենց ուսումը, երբ նրանցից պահանջվում է օգտագործել դրանք:
Դոնա Վիլսոնը և Մարկուս Քոնյերսը ասել են , որ ենթադրվում է, որ ԱՄՆ-ում աշակերտները մինչև 18 տարեկանը անցկացնում են մոտ 20,000 ժամ դասարանային կրթություն ստանալու համար, և դասավանդված նյութի մեծ մասը կարճ ժամանակում մոռացվել է: Եվ կան քիչ ապացույցներ, որ նրանք գիտեն, թե ինչպես կիրառել արդյունավետ ուսուցման ռազմավարությունները, երբ նրանք գալիս են քոլեջ:

Ըստ էության, շատ աշակերտներ չեն սովորել, թե ինչպես պահպանել և կիրառել գիտելիքները: Բարեբախտաբար, ընթացիկ հետազոտությունը հետաքրքիր պատկերացումներ է տալիս ուղեղի ավելի բարձր մակարդակներում սովորելու կարողության մասին, երբ օգտագործվում են արդյունավետ ուսուցման ռազմավարություններ:

Սովորելու մոտիվացիան հաջողության բանալին է դպրոցում:

ուղղորդել

խրախուսել

աջակցել

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը անց եմ կացրել Վարդենիսիս համար 3 հիմնական դպրոցի 9-րդ դասարանում:

Դասարանում կան ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներ, և ենթադրում եմ `համագործակցային մեթոդով ներգրավել նրանց դասապրոցեսում :

Ուսումնասիրելով վերը նշված գրականությունը՝ եկա այն եզրահանգմանը , որ աշակերտներին տալով ազատություն դասապրոցեսում, կհանգի համգործակցային աշխատանքի բարելավմանը:Այս հետազոտության ընթացքում իմ ուշադրության կենտրոնում եղել են ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները:Որոնք ունեն ուշադրության բացակայություն ,առաջադիմության ցածր մակարդակ: Ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին դասին ներգրավելու համար կան տարբեր մեթոդներ, դրանցից են դասի պարզեցումը՝այսինքն փոքր հատվածներով տնային աշխատանքի հանձնարարումը, որոշ բառերի սովորելը, պարզ հարցերի կազմումը և դրանց պատասխանելը:Դասարանում գրատախտակին որևէ մեթոդով աշխատանք կատարելիս ընդգրկում եմ նրանց (ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներ), որպեսզի մոտիվացնեմ, բարձրացնեմ հետաքրքրությունը դասի նկատմամբ և ձևավորեմ պատասխանատվություն յուրաքանչյուր առաջադրանք կատարելու ժամանակ:Յուրաքանչյուր աշխատանք կատարելուց հետո, անկախ առաջադրանքի բարդությունից, աշակերտներին խրախուսում եմ: Նախքան հետազոտական դասը կատարել եմ հայտորոշում բանավոր հարցման միջոցով և ստացել եմ դրական պատասխան աշակերտներից :Նշեմ , որ նրանց մեջ էին նաև ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները: Նախ ներկայացնեմ առաջին կատարած հայտորոշիչ թեստի տվյալները, որի հիման վրա կազմել եմ աղյուսակ:

աշակերտներ	Կցանկանա՞ք կատարել հետազոտական աշխատանք	Չեմ ցանկանա	Հետաքրքրիր չէ
N1		v	
N2		v	
N3		v	
N4		v	

N5	v
N6	v
N7	v
N8	v
N9	v
N10	v
N11	v

Հայտորոշիչ թեստը եղել է կազմված և բանավոր , և գրավոր հարցերի հիման վրա: Տե՛ս հավելված **1-**ում**:** Հայտորոշումից պարզ դարձավ, որ աշակերտների հիմնական մասը ունի հետաքրքրություն կատարելու հետազոտական դաս: Իսկ 2 ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին կփորձեմ մոտիվացնել ներառելով համագործակցային աշխատանքներում: Որովհետև նրանք անհատապես կաշկանդվում են ներկայացնել իրենց կարծիքը , իսկ համագործակցային աշխատանքներում դրսևորում են ակտիվություն:

Ուստի ելնելով վերը նշված փաստերից կշարունակեմ իմ աշխատանքը և կփորձեմ նրանց ներգրավվել , որ կատարեն տարբեր առաջադրանքներ:Եվ ենթադրում եմ ստանալ իմ հարցերի պատասխանները հետազոտության վերջում

●Արդյո՞ք ես հասա իմ նպատակին:

●Աշակերտները մոտիվացվեցի՞ն

●Յուրաքանչյուր դասի անդրադարձը տվե՞ց իր արդյունքը, թե ոչ:

ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Հետազոտությունս անցկացրել եմ Վարդենիսի համար 3 հիմնական դպրոցի 9-րդ դասարանում:

9-րդ դասարանի իմ խումբը բաղկացած է 16 աշակերտից,որոնցից 10-ը տղա է, իսկ 6-ը աղջիկ:

Աշակերտներից 4 աշակերտ ունեն բարձր մակարդակի գիտելիքներ,10-ը միջին մակարդակի գիտելիքներ,մյուս երկուսը թույլ են սովորում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Նախքան հետազոտական դասը անցկացրել էի դաս , որտեղ պետք է կատարեի բառապաշարի ամրապնդում և հարց+պատասխան տարբերակը, որը հաջորդ դասին օգտագործվելու էր հետազոտական դասի ժամանակ: Ես կատարեցի զույգերով աշխատանք , որպեսզի համոզվեմ , որն է ավելի արդյունավետ: Կազմեցի զույգեր և հանձնարարեցի դասի վերաբերյալ կազմել հարց , իսկ մյուս աշակերտը պետք է պատասխաներ հարցին: Կային շատ ստացված պատասխաններ , բայց միևնույն ժամանակ կային թերի պատասխաններ: Իհարկե ուղղեցի սխալ պատասխանները , բայց զգացի կաշկանդվածություն:Ինչքան էլ փորձում եմ առողջ մթնոլորտ ստեղծել ,մեկ է կա լարվածություն:

Զույգերով աշախտանքի ժամանակ, երբ թույլ սովորողին միացնում ես ուժեղ կամ միջին սովորողի հետ նրանք հարց կազմելիս և պատասխանելիս հույսը դնում են լավ սովորողների վրա:Իսկ համագործակցային աշխատանքների ժամանակ կատարում են ճիշտ աշխատանքի բաժանում, որն էլ նպաստում է խմբի՝ հատկապես ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների պատշաճ ներկայանալուն: Եվ այս ամենից հետո ես եկա այն եզրակացությանը, որ համագործակցային մեթոդը ավելի արդյունավետ է:Չնայած նա էլ ունի իր ուժեղ և թույլ կողմերը:

ՓՈՐՁԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1

Հետազոտության 1-ին դասին կատարել եմ համագործակցային դաս , բայց եղել է նաև զույգերով աշխատանք: Դասի թեման "The Pickwick club" էր:Դասի նպատակը ծանոթանալ բառապաշարին ,որտեղ պետք է սովորեին ընտրությանը վերաբերվող բառեր:"Pickwick club"-ը իրականում կուսակցության անվանումն էր , որտեղ փորձում էին ամեն գնով հաղթել ընտրություններում : Դասը կառուցված էր տարբեր փուլերով: Նախ վերհիշեցին բառերը կազմեցին բանավոր նախադասություններ, որի նպատակն էր ստուգել քերականական իմացությունը, բառապաշարը և գրագիտությունը:Որից հետո կազմեցին զույգեր և կատարեցին աշխատանք , որտեղ պետք է տրված բառերը օգտագործելով կազմեին հարցեր և պատասխանեին հարցերին ,որի նպատակը ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների ներգրավումն էր սովորել սովորելու մեթոդով:Կային և՛ ակտիվ ,և՛ պասիվ աշակերտներ,բայց բոլորը(ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներ), արժանի էին խրախուսանքի, որպեսզի էլ ավելի մոտիվացվեն: Այս աշխատանքից հետո կարդացին , թարգմանեցին դասը և քննարկեցին:Իմ կողմից առաջադրված հարցերին պատասխանում էին բոլորը ,որոնց մեջ էին 2 ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները, որը մեծ անակնկալ էր:Տնային աշխատանքը գրել էին բոլորը առանց բացառության: Քանի որ բառապաշարը արդեն յուրացրել էին հեշտ էր եղել այն կատարելը: Քննարկելուց հետո ևս մեկ անգամ կրկնեցի իմ բանավոր կատարած հայտորոշման հարցերը համոզվելու համար ուզում են շարունակել հետազոտական աշխատանքը, թե՝ ոչ
Արդյո՞ք հետաքրքրիր է այս բուռն աշխատանք կատարելը:
Կցանկա՞նք շարունակել :
Եվ ոգևորիչ պատասխան լսելը մեծ մոտիվացիա էր իմ՝ուսուցչիս համար:Չնայած դեռ քիչ թե շատ կար պասիվություն նրանց մեջ(ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներ): Այս ամենը քննարկելուց հետո ,քանի որ գիտեին բառապաշարը, ծանոթ էին նյութին ,որոշեցի հաջորդ դասը կատարել ՛՛Ընտրություն՛՛ :Բաժանեցի նրանց 2 խմբի ընտրեցի ավագներին և որոշակի մտահաղացումներ,ուղղություններ տվեցի հաջորդ հետազոտական դասի վերաբերյալ և, ի զարմանս ինձ, նույն պահին սկսեցին աշխատել: Նրանց մեջ էին նրանք(ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներ): Նրանցից մեկը տեղում արագ գծագրեց ֆուտբոլի և բասկետբոլի դաշտերի գծանշումները և ներկայցրեց:

Մյուս տղան ուզում էր օգնել , բայց չուներ հեռախոս: Մոտեցավ ընկերոջը, խնդրեց հեռախոսը և սկսեց աշխատել:3-րդ տղան ուղղակի նայում էր :Երբ բոլորը սկսեցին ոգևորված կատարել աշխատանքի բաժանում ,նա էլ կարծես մոտիվացվեց և միացավ նրանց:Տնային աշխատանքը հանձնարարելուց հետո դեռ կար 3ր, և ես մեծ ոգևորությամբ էի հետևում նրանց աշխատանքին :

Այս դասի ընթացքում ես հասկացա , որ համագործակցային մեթոդով դասն անցկացնելը շատ մեծ ոգևորություն է առաջացնում աշակերտների մոտ, որը նպաստում է նրանց՝ դասին ներգրավելուն և առաջադիմությանը:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

Այս դասը ևս անցկացվել է համագործակցային մեթոդով :Նախ կատարեցի մտագրոհ վերհիշելու բառապաշարը , որից հետո հարցադրումների միջոցով քննարկեցին հարցեր , որոնք կապ ունեն ընտությունների հետ:Նյութը քննարկելուց հետո ուղղեցի հարցեր ընտրությունների վերաբերյալ: Բոլորը շատ ակտիվ էին և մասնակցում էին դասին:Պատասխանում էին բոլոր հարցերին և լրացուցիչ նյութեր հայտնում: Քննարկելուց հետո, քանի որ նրանց նախապես բաժանել էի խմբերի , ուստի դրա վրա ավելորդ ժամանակ չծախսելով կատարեցին խմբային աշխատանք: Յուրաքանչյուր խմբի (կուսակցության թեկնածու)ավագ ներկայացրեց իր նախընտրական ծրագիրը, որտեղ փորձում էր վստահություն ներշնչել ընտրողների շրջանում: Նախնտրական քարոզարշավի ժամանակ պատրաստել էին լոգոներ, պաստառներ թեկնածուների նկարներով;

1-ին թեկնածուն ներկայանալուց հետո նախ ներկայացրեց իր կուսակցության ստեղծման պատմությունը, անդամներին, որից հետո ներկայացրեց իր նախընտրական ծրագիրը: Ծրագրի նպատակն էր ունենալ գեղեցիկ վերանորոգված ֆուտբոլի, բասկետբոլի, դաշտեր կլինի օգտակար և համայնքին, և դպրոցին ,որտեղ խոտը կլինի բերված արտասահմանից և կհսկվի հատուկ մարդկանց կողմից որպեսզի չփչանա: Ընտրվելու դեպքում համայնքը և դպրոցը կունենան վերանորոգված դաշտ բոլոր հարմարություններով՝ հանդերձարաններ և լողասենյակներ: Ներկայացնելուց հետո ընտրողները ուղղում էին իրենց հարցերը, նշեմ , որ մասնակցում էին նաև ցածր առաջադիմություն ունեցողները: Իսկ թեկնածուն գրագետ պատասխանում էր հարցերին:Այս ամենը այնքան սահուն և գեղեցիկ ընթացավ կարծես իրական լիներ:

2-րդ թեկնածուն ևս ներկայացրեց իրեն, իր կուսակցությունը և անդամներին, որից հետո ներկայացրեց իր նախընտրական քարոզարշավը:Նրա ծրագրի նպատակն էր բացել անգլերենի խմբակ"English club", որը կնպաստեր աշակերտների, համայնքի՝մինչև 25 տարեկան մարդկանց անգլերեն լեզվի բարելավմանը: Այս խմբակը կբացվի ի օգուտ համայնքի և դպրոցի:

Ներկայացումը շատ գեղեցիկ և տպավորիչ էր: Ընտրված էր գեղեցիկ նկարներ, որը ընտրել էին խմբի ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները: Ընտրողները տալիս էին հարցեր խմբակի վերաբերյալ, իսկ թեկնածուն հանգամանալից պատասխանում էր:

Խմբերի աշխատանքներին ծանոթանալուց հետո կազմակերպվեց քվեարկություն: Աշակերտները առանց ինձ հարցնելու կազմակերպել և բերել էին քվեաթերթիկներ , որտեղ գրված էին թեկնածուների անունները, ծրարներ, քվեատուփ;Հանձնաժողովի անդամները (նախագահ , քարտուղար,վստահված անձիք և անդամներ)ընտրության բացումն կատարեցին հաջողություն մաղթելով թեկնածուներին:Նրանք առաջինը կատարեցին իրենց ընտրությունը, որից հետո ընտրեցին մյուս ընտրողները: Ավարտից հետո հաշվեցին չօհտագործված քվեաթերթիկները առանձնացրեցրն և սկսեցին հաշվարկը:Այս գործընթացին շատ ակտիվ էին ցածր առաջադիմություն ուեցող աշակերտները:Հաշվարկից հետո հայտարարեցին հաղտող թեկնածուի անունը:Շնորհավորելուց հետո շարունակեցին դասը:

Հանձնարարեցի կատարել խմբային մեկ այլ աշխատանք՝բառերի հավաքագրում և ձևավորում:Նրանց բաժանեցի պաստառներ, ինքնակպչուն թերթիկները և մարկերներ: Շատ գեղեցիկ պատկերել էին պաստառները և նրանց վրա հավաքագրել բառեր:Ներկայացնելուց հետո հանձնարարեցի տնային աշխատանք՝ գրել շարադրություն՝ ՛՛If I were a president…".Որից հետո կատարեցի ձևավորող գնահատում՝ և խումբ, և անհատական:
Այս դասից հետո հասկացա , որ համագործակցային մեթոդով դաս անելիս աշակերտները չեն ձանձրանում:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նախքան հետազոտական դասը անցկացրեցի բանավոր հայտորոշիչ թեստ ,որտեղ աշակերտները դրական արձագանք տվեցին :Ելնելով այդ արձագանքից՝ կազմեցի այդ թեստի աղյուսակային տարբերակը , որը կցված է գործնական համատեքստ բաժնում: Դրանից պարզ դարձավ , որ նրանք ունեն հետաքրքրվածություն կատարելու հետազոտական դաս:

Փորձնական դասին կատարվեց զույգերով աշխատանք , որտեղ քիչ ակտիվություն ցուցաբերեց մեկը: Իսկ մյուս երկուսը ակտիվ չէին:

Հաջորդ աշխատանքը հետազոտական առաջին դասն էր: Առաջին դասին արձանագրվեց որոշակի փոփոխություն որոշ աշակերտների մոտ: Իհարկե, երբ գովեստի խոսքեր ես ասում, նրանք կարծես սթափվում են, և ցանկություն է առաջանում կատարել որևէ աշխատանք:

Ուսուցիչ	
Կատարել են գրառումներ	**10**
Հետևել են նյութին	**11**
Պատասխանել են հարցերին	**9**

1. Ցուցաբերում է հետաքրքրվածություն 9

2. Մասնակցում է դասին 14

3. Հետևում է դասընթացին 11

4. Հետևում է դասընկերների աշխատանքին 10

5. Կատարում է գրառումներ 6

6. Պատասխանում է հարցերին 9

7. Հարցեր է տալիս 7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով վեր նշված բոլոր կետերը և գրականությունը՝ կարելի է եզրակացնել , որ

1.համագործակցային մեթոդով աշխատանքների ճիշտ կազմակերպումը պահանջում է ուշադրություն, որտեղ պետք է

●հաշվի առնել նրանց ցանկությունները

●հաշվի առնել սովորողի տարիքային և անհատական առանձնահատկությունները

●բացահայտել սովորողի ընդունակությունները և ապահովել նրա հետագա զարգացումը

●կարևորել սովորողների ներգրավումը դասերի տարբեր փուլերում: Աշակերտների հետ տարվող աշխատանքը հասցնել ուսումնահետազոտական մակարդակի՝ համալրելով գիտությամբ ցանկացող զբաղվողների քանակը՝ նկատի ունենալով, որ ուսումնահետազոտական աշխատանքը սովորողների մտածողության զարգացման , իմացական և կարողությունների , ինքնուրույնության, գիտական աշխարհայացքի մտածողության և հետազոտական մշակույթի ձևավորման կարևոր միջոցներից է.

● ակտիվացնել սովորողների ուսումնական գործունեությունը՝ կիրառելով ուսուցման գործընթացը և սովորողների իմացական գործունեությունը, որոնք կնպաստեն սովորողների մտածողության զարգացմանը:

●խմբային աշխատանքների ժամանակ սովորողը ավելի պատասխանատու է դառնում իր գործը կատարելիս

● խմբային աշխատանքների ժամանակ ձևավորվում է սովորողի ինքնավստահությունը սեփական անձի նկատմամբ, վերլուծական մտածողություն է ձեռք բերում ,որն էլ հանգում է նրանց ունակությունների բարձրացմանը

Իմ կատարած հետազոտական 2 դասերից եկա այն եզրակացությանը, որ համագործակցային մեթոդով դաս վարելը մոտիվացնում է աշակերտներին: Այս պարագայում ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները ցուցաբերեցին դրական տեղաշարժ իրենց ակտիվությամբ և մասնակցությամբ, չնայած եղան դեպքեր ,երբ նկատվեց որոշակի անկումներ:Բայց այն ոգևորվածությունը , որ ունեին աշակերտները ընթացքում շատ կարևոր էր:Եվ դրական մի փաստ ևս արձանագրեցի, քանի որ աշակերտները աշխատել էին միասին և չեմ առանձնացրել ոչ ոքի , այդ աշխատանքից չթուլացան և չընկճվեցին լավ սովորողները:Հակառակը նրանց

գիտելիքները ավելացավ , իսկ ակտիվությունը կրկնապատկվեց: Հույսով եմ այս ակտիվությունը կշարունակվի և կունենամ իր տրամաբանական շարունակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. G. Petty Teaching today (a practical guide), Moscow 2010 Motivation, p.62-82

2. Donna Wilson and Marcus Conyers “Guiding Students to Be Independent Learners”

3. Ա. Գենցերովա Методические материалы

4. Cooper J. Robinson "Small- group instruction in science, mathematics, Engineering and Technology (SMET)

5. Статья: "Технология обучения в сотрудничестве"

https://infourok.ru/statya-na-temu-tehnologiya-obucheniya-v-sotrudnichestve-1556219
6. Adolf disterberg https://ru.citaty.net/avtory/adolf-disterveg/

ՀԱԿԵՐԱՑ

Հայտորոշիչ թեսթ

(դասարանի հետ)

Սիրելի՛ աշակերտներ, հետազոտական աշխատանքիս շրջանակներում անցկացնելու եմ հետազոտություն, որի նպատակն է ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին ներգրավել դասերին:

Հետազոտությունը անանուն է լինելու. հրապարակվելու է միայն վերլուծված տարբերակով:

1. Կ՞օգնեք ինձ այս աշխատանքը կատարեմ:

ա. այո

բ. ոչ

գ. հետաքրքրիր չէ

Պատասխանը արդեն ոգևորիչ էր, բայց չէին պատկերացնում, թե ինչ պիտի անեն:

Որոշակի ցուցումներ տալուց հետո , աշակերտներից մեկը (ցածր առաջադիմություն ունեցող) ասաց, որ կներբեռնի նկարներ ֆուտբոլի և բասկետբոլի դաշտերի վերաբերյալ և կտրամադրի դրանց ճիշտ գծանշումների թիվը:

II տղան լուռ էր: Ես գիտեմ, որ նա կարող է լավ սովորել, բայց սոցիալ-տնտեսական վիճակը թույլ չի տալիս (չունեն համակարգիչ և ինտերնետ):

Հետո նկատեցի, թե ինչպես ընկերներից խնդրեց հեռախոս և սկսեց ինչ- որ բան փնտրել: Իմ հարցին թե՞

2. Ի՞նչ ես անում,- նա պատասխանեց:

Փորձում եմ նյութ փնտրել:

III տղան անտարբեր նստած էր:

Երբ երեխաները արագ աշխատանքի բաժանում էին անում, նա (անտարբեր նստած տղան) մոտեցավ ինձ և հարցրեց.

Իսկ ես ի՞նչ կարող եմ սովորել, որպեսզի պատրաստ ներկայանամ հետազոտական դասին կամ այսուհետ դասերին:

Հայտորոշիչ թեսթից պարզ դարձավ, որ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները մոտիվացվեցին:Ես գրանցեցի ինձ համար I դրական տեղաշարժը:Իսկ հիմա անհամբեր սպասում եմ I հետազոտական դասին:

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Մայա Պետրոսյան

Առարկա՝	Անգլերեն	Ամսաթիվ	15.04.2022թ.	Կիսամյակ	2	Դասարան	9
Խմբի Կառուցվածքը	խումբը բաղկացած է 16 աշակերտից,որոնցից 10-ը տղա է, իսկ 6-ը աղջիկ:						
Թեմա՝	**"The pickwick club"**						
Օգտագործվող նյութեր	Գրենական պիտույքներ, հարցաթերթիկներ, դասագիրք և այլ օժանդակ նյութեր						
Դասի նպատակը՝	Աշակերտը • Իմանա բառապաշարը • Ծանոթ լինի նյութին • Իմանա ինչպես կազմել հարցեր • Իմանա դրանց պատասխանները • Խմբի անդամները օգնեն իրար (ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին)կատարելու այդ աշխատանքը • Ինքնուրույն գտնեն որոշակի նյութեր • Կարողանա ինչ-որ չափով ինքնուրույն վերլուծել թեման						

Ուսուցման փաստեր,որոնք կվիճարկեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան (ցածր առաջադիմություն ունեցող) ●ինքնուրույն կկատարեն որևէ առաջադրանք ●կառաջարկեն իրենց տեսակետը ●կօգնեն ընկերներին ●կսովորեն բառապաշարը ● կսովորեն նյութը ●կծանոթանան ընտրության կարգին ●դրական տեղաշարժ կունենան (ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներ) այսինքն՝ այս փորձարարական դասից հետո կմոտիվացվեն և դասերին կներկայանան ավելի ակտիվ և պատրաստ:

Գործողություններ Ժամ/տևողություն	Դասի փուլերը	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Առանցքային հարցեր

5-10ր	Աշակերտները ողջունում են ուսուցչին և տեղավորում իրենց տեղերում, Հարցերի միջոցով անցածի կրկնություն	Ողջունում է աշակերտներին - Բացակա աշակերտներին է գրանցում Հարցերի ուղղում աշակերտներին	Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է դասին Հարցերի պատասխանում	
15-20ր	Ընթացք	Դասը հարցնել կարդալ ,թարգմանել, նախ պատասխանել իմ հարցերին:Հետո բաժանել զույգերի՝ մեկ լավ, կամ միջին սովորող, մեկ թույլ:Հանձնարարել կազմեն հարց+պատասխան տվյալ թեմայի վերաբերյալ և զույգերով ներկայացնեն: Առաջարկել կատարել համագործակցային դաս: Նախ կատարել հայտորոշում բանավոր տարբերակով:	Ուսուցչի ուկնդրում, Հարցերի պատասխանում, Զույգերի բաժանում, Հարցերի կազմում և պատասխանում:	
7-10ր	Ավարտ	Աշակերտներն բաժանել 2 խմբի և տալ ցուցումներ հաջորդ հետազոտական դասի վերաբերյալ:	Ուսուցչի ուկնդրում: Գրավոր աշխատանքի կատարում:	

		Տալ յուրաքանչյուր խմբին հանձնարարություններ Գրավոր աշխատանքի կատարում: Տնային աշխատանքի հանձնարարում և գնահատում		
Տնայինաշխատանք 3-5ր		Տնային հանձնարարությունն իր մեջ ընդգրկվում է հիմնականում ● Թեմային վերաբերվող հարցեր և առաջադրանքներ		

Դասապլան 2

Ուսուցչուհի՝ Մայա Պետրոսյան

Առարկա՝	Անգլերեն	Ամսաթիվ	17.04.2022թ.	Կիսամյակ	2	Դասարան	9
Խմբի Կառուցվածքը	խումբը բաղկացած է 16 աշակերտից,որոնցից 10-ը տղա է, իսկ 6-ը աղջիկ:						
Թեմա՝	**"Election"**						
Օգտագործվող նյութեր	Գրենական պիտույքներ, հարցաթերթիկներ, պաստառներ						
Դասի նպատակը՝	Աշակերտը • Իմանա ինչ է ընտրությունը • Իմանա ընտրության կարգը • Իմանա ինչպես են ընտրում • Իմանա թե որ տարիքից կարող են մասնակցել ընտրությանը • Տարբերի վարչապետի և նախագահի գործունեությունները • Կարողանա հարցեր առաջադրի և պատասխանի որոշակի հարցերի • Կարողանա ինչ-որ չափով ինքնուրույն վերլուծել թեման • Ունենա ինքնուրույն, ստեղծագործական, խոսք:						

Ուսուցման փաստեր,որոնք կվիճարկեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան (ցածր առաջադիմություն ունեցող) ● հիշել որոշակի բառեր ընտրության վերաբերյալ փորձել գրել որևէ բառ ● կազմել հարցեր ● պատասխանել հարցերին ● նկարագրել

Գործողություններ Ժամ/տևողություն	Դասի փուլերը	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Առանցքային հարցեր

5-10ր	Աշակերտները ողջունում են ուսուցչին և տեղավորում իրենց տեղերում, Հարցերի միջոցով անցածի կրկնություն	Ողջունում է աշակերտներին - Բացակա աշակերտներին է գրանցում Հարցերի ուղղում աշակերտներին	Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է դասին Հարցերի պատասխանում	
15-20ր	Ընթացք	Բազմաբնույթ հարցադրումների միջոցով ստուգել անցած թեմայի յուրացումը(արդյոք հիշում են անցած թեման և դրան վերաբերվող բառապաշարը: Որպես նոր դասի նախաբան հարցադրումներով անդրադառնալ ընտրությունների ն և անցկացման կարգին:(ինչ գիտեն): Աշակերտներն հանձնարարված աշխատանքի շրջանակներում արդեն բաժանել էի 2 խմբերի՝ընդգրկելով տարբեր մտածողության աշակերտների: Յուրաքանչյուր խումբ ներկայացնի իր նյութը , իսկ հակառակ խումբը պետք է տա հարցեր:	Ուսուցչի ուկնդրում, Հարցերի պատասխանում, Խմբերի բաժանում Յուրաքանչյուր Խումբ ներկայացնի իր նյութը:	

7-10ր	Ավարտ	Աշակերտներն բաժանել 2 խմբի և տալ ցուցումներ հաջորդ հետազոտական դասի վերաբերյալ: Տալ յուրաքանչյուր խմբին հանձնարարություններ Գրավոր աշխատանքի կատարում: Տնային աշխատանքի հանձնարարում և գնահատում	Ուսուցչի ուկնդրում: Գրավոր աշխատանքի կատարում:	
Տնայինաշխատանք 3-5ր	Տնային հանձնարարությունն իր մեջ ընդգրկվում է հիմնականում • Թեմային վերաբերվող հարցեր և առաջադրանքներ • Այն իր մեջ նաև ներառում է հարցեր ,որը կապ է հաստատում			